Մարիամ Կարապետյան
Ֆինանսական ֆակուլտետ, 3-րդ կուրս
Հասելթի համալսարան (Բելգիա)

Ես Մարիամն եմ, ևս մեկ էրազմուսյան ուսանող, ում կյանքի մի հատվածը դարձան այս 5 ամիսները: Էրազմուսյան այս հնարավորությունը կանգնած է երազանքների և իրականության մեջտեղում: Շնորհակալ եմ, որ իմ բազմաթիվ երազանքներ տեղափոխեցիք դեպի իրականություն: Ուսումնառությունս անցավ Հասելթի համալսարանում, որի կենտրոնում գտնվում է ուսանողը, և համալսարանը իր յուրօրինակ մեթոդներով օրերդ դարձնում է ավելի հետաքրքիր, ծանրաբեռնված և անմոռանալի իսկ միջազգային ուսանողների համար կազմակերպվում է մշակութային տարբեր միջոցառումներ և այցեր տարբեր քաղաքներ: Ես այստեղ սովորեցի լինել ինքնուրույն, շփվել տարբեր երկրների, մշակույթների մարդկանց հետ, հետաքրքիր ժամանակ անցկացնել ընկերների հետ, հեծանիվ քշել ամեն օր, ամեն կիրակի նոր քաղաք բացահայտել Բելգիայում: Անմոռանալի օրեր, հարազատ դարձած ընկերներ, արկածներով լի ճամփորդություններ, հարատև ուսումնառություն իր ֆորմալ և ոչ ֆորմալ արտահայտումներով, որոնք կյանքում չես կարող մոռանալ:

Անի Խաչատրյան
Մարքեթինգի և բիզնես կազմակերպման ֆակուլտետ, մագ. 1-ին կուրս
Միկոլաս Ռոմերիսի անվան համալսարան (Լիտվա)

Ողջու՛յն, հարգելի՛ ընթերցող: Ես Անին եմ՝ մագիստրատուրայի ուսանող, որի էրազմուսն անցնում է մի չքնաղ քաղաքի՝ Վիլնյուսի՝ Միկոլաս Ռոմերիսի անվան համալսարանում: Էրազմուսական խելահեղ կյանքն ինձ համար սկսվեց հունվարի 27-ից, երբ ես առաջին անգամ առերեսվեցի այն իրականությանը, որն ինձ սպասում էր: Անկեղծ ասած՝ պատկերացումներս էրազմուսի մասին լրիվ այլ էին և ակնկալվում էին սովորական համալսարանական օրեր՝ լի դասերով և քննություններով: Բայց երկրորդ իսկ օրվանից հասկացա, որ սա մի ուրիշ աշխարհ է: Սկսեցի ծանոթանալ տասնյակ տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ, զարմացա նրանց՝ Հայաստանի մասին գիտելիքների բավականին մեծ պաշարից, ձեռք բերեցի մի քանի չափազանց մտերիմ ընկերներ, և սկսվեց մեր արկածային կյանքը: Այցելեցինք Լիտվայի մի քանի քաղաքներ, բացահայտեցինք մայրաքաղաքի գեղեցկությունը, մեկ շաբաթ անց՝ համալսարանական դասընթացները :)

Բառերով դժվարանում եմ ամբողջովին բնութագրել, թե որքան հրաշալի ենք անցկացնում մենք այն հինգ ամիսը, որը մեզ տրված է: Խնջույքներ, ծննդյան տոներ, ֆիլմերի դիտումներ, սովորական օրեր՝ լի զրույցներով և տարտեսակ խաղերով, դե, իհարկե, չենք մոռանում նաև դասերի մասին, որոնք ընդհանրապես չեն ծանրաբեռնում մեր առօրյան և բավականին հետաքրքիր են և բովանդակալից: Թող աղմկահարույց և պաթետիկ չհնչի, բայց էրազմուսական օրերն իմ կյանքի լավագույն օրերից են, և երջանիկ են այն բոլոր ուսանողները, որոնք գոնե մեկ անգամ ստանում են էրազմուսի ուսանող լինելու հնարավորություն:

Արփինե Մաթևոսյան
Ֆինանսական ֆակուլտետ, 2-րդ կուրս
Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Կան իրադարձություններ, որոնք մոռացվում են, և կան իրադարձություններ, որոնք հավերժ դաջվում են մեր հիշողության մեջ: Այդպիսին էին վերջին ամիսները: Ապրել օտարության մեջ, հեռու հարազատ երկրից ու ընտանիքից, բայց միևնույն ժամանակ հարազատ դառնալ այն մարդկանց, ում հետ վիճակված էր կերտել այս պատմությունը Եվրոպայի սիրտ Գերմանիայում՝ մեր փոքրիկ քաղաք Ցվիկաուում:

Մեծ պատիվ էր ինձ համար սովորել աշխարհի ամենազարգացած և ազդեցիկ երկրներից մեկում: Հնարավորությունը ընտրել այն առարկաները, որոնք ցանկանում էի սովորել, և կազմակերպել սեփական օրակարգը, օգնեց ինձ ավելի մեծ պատկերացում կազմել այն ոլորտի մասին, որում կուզեի մասնագիտանալ:

Էրազմուսը ինձ շատ բան տվեց: Ունեցա փորձ աշակերտել միջազգային որակավորմամբ մասնագետներին, ավելի խորը և վերլուծական գիտելիքներ ստանալ: Խմբային աշխատանքներով ներկայացա այլազգի ուսանողների հետ, լավացրի լեզվական գիտելիքներս: Սա մեծ ազդեցություն ունեցավ սեփական ինքնազարգացման վրա: Ես սովորեցի համագործակցել, մի կողմ դնել սեփական շահերը և կիսել հաջողությունը մյուսների հետ:

Բայց սա այն չէ , ինչի մասին կուզեմ պատմել: Իմ պատմությունը 6 ամսական է: 6 անմոռաց ամիսներ, ամիսներ՝ հիմնված սիրո ու հարգանքի, հավատի ու վստահության վրա: 6 ամսվա պատմություն, որ կերտել է մեզնից յուրաքանչյուրը: Մեծագույն ձեռքբերում էր Էրազմուս ընտանիքի անդամ լինելը: Այո՛, դա մի մեծ ընտանիք էր իրեն բնորոշ ավանդույթներով, սովորույթներով, բառերով և արտահայտություններով: Անգնահատելի էր տեսնել այն միասնությունը, ամուր ընկերությունը, որ իշխում էր խմբում: Տեսնել մեկս մյուսի հպարտությունից փայլող աչքերը , երբ ներկայացնում էինք մեր երկիրը:

Այս ուղին մեզ ավելի ինքնուրույն դարձրեց, սովորեցրեց ընդունել որոշումներ և պատասխանատու լինել դրանց համար: Միշտ հիշվելու են արկածներով լի ճամփորդություններ ծրագրելը, դժվարությունները, որոնց հանդիպեցինք այդ ընթացքում և հաղթահարեցինք առանց կորցնելու մեր հույսն ու հումորը:

Հրաշալի գաղափար էր տարբեր ազգերի լիովին տարբեր մտածողությամբ ու ապրելակերպով մարդկանց միևնույն նպատակի համար հավաքելը: Սովորեցինք վայելել յուրաքանչյուր րոպեն, չէ՞ որ կյանքում կարևորը պահն է, ամեն վայրկյանը, որը դառնում է հիշողություն, մնում մեր սրտում և ուղեկցում մեզ ողջ կյանքի ընթացքում: Ահա սա է իրական հաղթանակը, այն ոգին, որն իմաստավորվեց մեզնից յուրաքանչյուրի մեջ:

Արփինե Թադևոսյան
Ֆինանսական ֆակուլտետ, 3-րդ կուրս
Վառնայի տնտեսագիտական համալսարան (Բուլղարիա)

Երազանք, նպատակ, իրականություն... Միշտ հավատացել եմ այս շղթայի ուժին: Դեռ դպրոցական հասակում արտասահմանում սովորելը եղել է երազանքներս մենկը: Ընդունվելով համալսարան՝ իմացա «Էրազմուս+» ծրագրի մասին, և հստակ նպատակ դրեցի լինել այն ուսանողներից մեկը, ում կընձեռնվի այդ պատասխանատու հնարավորությունը ՝ սովորել արտերկրում և ներկայացնել հարազատ բուհը:

Այս ծրագրի շնորհիվ հնարավորություն եմ ստացել 1 կիսամյակ ուսումնառել Վառնայի տնտեսագիտական համալսարանում: Այն ամենահին համալսարաններից մեկն է Բուլղարիայում և առանձնանում է իր դասավանդման ուրույն ոճով: Այստեղ ես բացահայտեցի ինձ համար նոր ոլորտներ, խորացրի տնտեսագիտական տեսական և պրակտիկ գիտելիքներս, զարգացրի թիմում աշխատելու ունակությունս: Բացի այդ հնարավորություն ունեցա շփվել բարձր որակավորում և բազմամյա միջազգային փորձ ունեցող դասախոսական կազմի հետ, ինչպես նաև այլ երկներից ժամանած դասախոսների հետ:

Բացի որակյալ կրթություն ստանալը, Էրազմուսն ինձ հնարավորություն ընձեռեց ապրել նոր մշակույթում, կիսել նրանց առօրյան, բացահայտել աննկարագրելի գեղեցիկ Բուլղարիան, ճամփորդել, գնալ արկածների հետևից, ելք գտնել ամեն իրավիճակից, լինել ինքնուրույն և, ինչն ամենակարևորն է, ձեռք բերել ընկերներ աշխարհի բազմաթիվ երկրներից:

Այստեղ ես անցկացնում եմ կյանքիս ամենագունավոր և պայծառ ժամանակահատվածներից մեկը, երբ յուրաքանչյուր օրդ լի է բացահայտումներով, նոր ծանոթություններով և արկածներով:

Էրազմուսը ինձ սովորեցրեց գնալ իմ երազանքի հետևից, ունենալ նորանոր նպատակներ, ձգտել նոր բարձունքների, հավատալ ինքդ քեզ և շարժվել առաջ: Այս 4 ամիսները դարձան շարժիչ ուժ հետագա ողջ կյանքիս համար, և հուսով եմ՝ վերադառնալուց հետո ձեռք բերած գիտելիքներս կկարողանամ կիրառել ի օգուտ հայրենիքիս:

Շնորհակալ եմ ՀՊՏՀ-ին և միջազգային կապերի բաժնի ողջ անձնակազմին այս հնարավորության համար:

Աննա Աբազյան
Ֆինանսական ֆակուլտետ, 2-րդ կուրս
Միշկոլցի համալսարան (Հունգարիա)

Ի՞նչ կարող եմ ասել: Ամեն ինչ հրաշալի է. Էրազմուսը կարող է դառնալ ձեր կրթության ամենալավ հատվածը:

Էրազմուսը գերազանց հնարավորություն է զարգանալու համար, բայց ոչ միայն որպես տնտեսագետ: Այն օգնում է աճել որպես անհատ և ընդունել մարդկանց այնպիսին, ինչպիսին կան:

Հայաստանից մեկնելուց առաջ երբեք չէի պատկերացնի, որ մարդիկ կարող են այսքան տարբերվել իրենց մտածելակերպով ու հայացքներով: Բայց, գալով Միշկոլց, հանդիպեցի բազմաթիվ մարդկանց տարբեր երկրներից իրենց յուրահատուկ ապրելակերպով ու ակնկալիքներով: Եվ հիմա, երբ ունեմ այլազգի ընկերներ, կարող եմ ասել, որ Էրազմուսը ջնջում է սահմանները:

Դավիթ Խառատյան
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ, 3-րդ կուրս
Կաունասի տեխնոլոգիական համալսարան (Լիտվա)

Էրազմուս անունը երևի 3,5 տարի կլինի՝ուղեղիս մեջ է: 2016 թվականին հնարավորություն ընձեռվեց մասնակցելու Ռումինիայի համալսարանում սովորելու համար կազմակերպված հարցազրույցին: Ցավոք ինձ չընտրեցին: Երևի կյանքիս ամենահիասթափված ու մռայլ օրերից էր: Ամռանը բանակ էի գնալու, բայց այդ նպատակը մտքիցս դուրս չէր գալիս ու դարձավ այն մոտիվացիան, որ ուղեկցեց ինձ ծառայության ընթացքում: Ծառայության ընթացքում փորձում էի չմոռանալ անգլերենը: Գիշերային հերթապահության ժամանակ, երբ բոլորը քնած էին լինում, իսկ ես՝ արթուն, մտքումս պատկերացնում էի հարցազրույց, պատասխանում էի տարբեր տիպի հարցերի ու եթե ինչ-որ բառ էի մոռացած լինում, դիրքից իջնելուն պես բացում էի բառարանս, նայում, հիշում, սովորում: Իմ փորձին նայելով կուզեմ ասել, որ միշտ իմանաք՝ դժվարին ճանապարհները տանում են դեպի լավ ապագա: Գիշերային մարտական հերթապահության ընթացքում -10 ու ավելի ցուրտ պայմաններում կանգնած չէի կարող անգամ պատկերացնել, որ այդ ամեն ինչը վերջանալու էր, ու ինձ սպասում էր կյանքի մի հիշարժան շրջան: Ծառայության ավարտից հետո վերադարձա՝ առաջնային պլանում ունենալով կրկին մասնակցելը և հոգու խորքում զգալով, որ այս անգամ բախտը ինձ ժպտալու է: Եվ այո, Լիտվա, Կաունասի համալսարան:

Էրազմուսը ճամփորդություն էր, որը ինձ տվեց մասնագիտական հսկայական գիտելիքներ, ընկերներ ավելի քան 20 երկրներից և տարբեր մշակույթների ու լեզուների հետ առնչվելու հնարավորություն: Ես միշտ երախտապարտ կլինեմ Կաունասի համալսարանին ամեն տիպի հարմարավետ պայմաններ ու մոտիվացված մթնոլորտ ապահովելու համար: Դասերը բավական հետաքրքիր էին, քանի որ յուրաքանչյուր պրոֆեսոր ուներ դասախոսությունները մատուցելու յուրահատուկ մեթոդ: Էրազմուսը չէր կարող այդքան կատարյալ լինել առանց իմ ընկերների: Ես երախտապարտ եմ յուրաքանչյուր ընկերոջս, ում հետ լավ ժամանակ եմ անցկացրել, ճանապարհորդել և ստեղծել անմոռանալի հիշողություններ:

Մեկ այլ կարևոր բան. ես Հայաստանից Կաունաս եկած առաջին ուսանողն եմ եղել: Ուստի լավ սովորելուց բացի ես պատասխանատու էի իմ երկիրն ու համալսարանը հավուր պատշաճի ներկայացնելու համար: Էրազմուսի ողջ ընթացքում ես արտասահմանցի ուսանողներին ծանոթացրել եմ հայոց պատմությանը, մեր մշակույթին, և, իհարկե, թե ինչն է մերը, որը ոչ ոք մեզանից չի կարող խլել: Ինչպես նաև,ընկերներիս հետ եմ կիսել այն գիտելիքները, որոնք ստացել եմ ՀՊՏՀ-ում: Վերջում շնորհակալություն եմ հայտնում Աստծուն, ընտանիքիս, ընկերներիս ու ՀՊՏՀ-ին, քանի որ այս ամենը չէր կայանա, եթե չլիներ նրանց աջակցությունը: Էրազմուսի տևողությունը 5 ամիս է, բայց ես այն կկարոտեմ ընդմիշտ:

Գոհար Ղուկասյան
Մարքեթինգի և բիզնես կազմակերպման ֆակուլտետ, մագիստրատուրայի 1-ին կուրս
Պուլայի Յուրա Դոբրիլայի համալսարան (Խորվաթիա)

Արտասահմանում սովորելու ցանկություն ունեի վաղուց, բայց ցանկությունս ուժեղացավ, երբ տեղեկացա այս ծրագրի մասին: «Էրազմուս+» ծրագրիրը ընձեռեց ինձ այդ հնարավորությունը, և այժմ սովորում եմ Խորվաթիայի Յուրայ Դոբրիլայի համալսարանում: Այս երիտասարդ համալսարանը հնարավորություն տվեց ոչ միայն ընտրել այնպիսի առարկաներ, որոնք ինձ արժեքավոր ու պրակտիկ գիտելիքներ տվեցին ժամանակակից մարքեթինգի և տուրիզմի վերաբերյալ, այլև ձեռք բերել այնպիսի հմտություններ ինչպիսիք են նեթվորքինգ, թիմային աշխատանք և թայմ մենեջմենթ: Պետք է նշեմ, որ համալսարանը հագեցած է ժամանակակից տեխնիկայով, դասերն անցկացվում են հոգատար և իրենց ոլորտում մասնագիտացած պրոֆեսորադասախոսական կազմի կողմից, բաց քննարկումներով և ընկերական միջավայրում. դրախտային միջավայր ուսանողի համար: Այդ ամենի հետ մեկտեղ այս ծրագրի շրջանակներում ձեռք բերեցի ընկերներ աշխարհի բազմաթիվ երկրներից, ծանոթացա տարբեր մշակույթներին և սովորություններին:

Ամփոփելով կցանկանայի ասել, որ շատ շնորհակալ եմ ՀՊՏՀ-ին և միջազգային կապերի բաժնի անձնակազմին այսպիսի անմոռանալի հնարավորություն ընձեռելու համար:

Հայկ Քալանթարյան
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, 2-րդ կուրս
Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Ողջույն: Ես Հայկն եմ՝ Տնտեսագիտական համալսարանի 2-րդ կուրսի ուսանող, ում բախտ է վիճակվել սովորել աշխարհում լավագույն կրթական համակարգ ունեցող երկրներից մեկում՝ Գերմանիայում: Որպես ապագա տնտեսագետ՝ չեմ կարող չնշել, որ ապրելը և սովորելը Եվրոպայում տնտեսությամբ առաջատար երկրում կլինի ամենանպաստող խթանը իմ տնտեսագիտական աշխարհայացքի ընդլայնման համար:

Ըստ իս, անցյալի ու ապագայի մեջտեղում դու պետք է կառուցես քո ամուր կամուրջը, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ անկախություն, իսկ անկախությանը հասցնող ճանապարհը կրթության "մենաշնորհն է": Էրազմուսյան կյանքի օրերը ինքնին ամուր ու մշակութաստեղծ քարեր են, քանզի դու դառնում ես միջազգային ուսանողության մասնիկը, սկսում ես ինքնուրույն ապրել, սովորում ես նոր լեզուներ, ուսում ես ստանում ամբողջությամբ նոր կրթական համակարգում:

Դու դառնում ես նաև Հայաստանի ներկայացուցիչը (իսկ երկրիդ մասին միշտ պատմելուց ու մշակութային երեկոյից հետո դու պարտավորվում ես դառնալ գիդ և հյուրընկալող օտարերկրացիների համար, որոնց մոտ մեծ ցանկություն կա հնարավորինս շուտ Հայաստան այցելելու ու քեզ հետ մի բաժակ կոնյակ խմելու): Այդ օրերը ներարկվում են մշակութային հագեցվածությամբ ,որովհետև դու շփվում ես և տեսնում, թե ինչպիսին են օտարերկրացիները կենցաղում և ինչ մտածելակերպ ունեն, ճանապար-

հորդում ես եվրոպական գեղեցիկ երկրներով ու քեզ մոտիվացիա մատակարարող «զամբյուղը» լցնում ես մինչև վերջին հնարավոր կաթիլը:

Ի վերջո դու սովորում ես մի համալսարանում, որտեղ ստեղծված են բոլոր պայմանները արդյունավետ ուսումնական պրոցեսի համար. մրցունակ և մոտիվացնող դասախոսներ, քաղաքի ծայրամասում՝ անտառների մեջ կառուցված համալսարան, ժամանակակից մեթոդներ և ճկուն գրաֆիկ, ապրումակցում համալսարանականի և համալսարանի միջև…

Լինելով առաջին ՀՊՏՀ-ականներից, ով ուսումը շարունակում է Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարանում՝ես էլ փորձում էլ լինել այն "կապող օղակներից" մեկը,որը կնպաստի հայկական և գերմանական բուհերի համագործակցության ընդլայնմանը և էլ ավելի շատ ՀՊՏՀ-ականներ իրենց ուսումը կշարունակեն Գերմանիայում:

Հնարավորությունների տեղատարափ կա էրազմուսյան կյանքում, և պետք է բաց ու պարզ ձեռքերով ընդունել ցանկացած դրականը և ամբողջությամբ մխրճվել նոր կրթական համակարգի "ճանկերի" մեջ: Ինչպես սիրում են ասել էրազմուսականները՝ Once Erasmus, Always Erasmus:

Խորեն Իսպիրյան
Ֆինանսական ֆակուլտետ, 3-րդ կուրս
Պուլայի Յուրա Դոբրիլայի համալսարան (Խորվաթիա)

Կրթությունը հիանալի կյանքի գրավականը չէ, կրթությունն ինքնին հիանալի կյանք է: Erasmus+ ծրագրի և ՀՊՏՀ միջազգային կապերի բաժնի շնորհիվ ինձ բախտ վիճակվեց իսկապես համոզվել այս խոսքերի ճշմարտացիության մեջ:

Սովորելով Խորվաթիայում՝ Յուրա Դոբրիլայի անվան Պուլայի Համալսարանում՝ ես հնարավորություն ստացա բացահայտելու ինձ համար յուրահատուկ մի նոր աշխարհ, հասնելու մասնագիտական ավելի բարձր որակի և ձեռք բերելու լավ ընկերներ: Սովորել արտերկրում նշանակում է նաև ներկայացնել քո երկիրն այնտեղ. այս փաստն էր, որ կրկնապատկեց բարձր առաջադիմություն ցուցաբերելու իմ ձգտումն ու պատասխանատվության զգացումը:

Համեմատաբար ճկուն գրաֆիկ ունենալը Erasmus+ ծրագրով արտերկրում սովորելու ամենամեծ առանձնահատկություններից է: Դրա շնորհիվ ինձ հնարավորություն ընձեռնվեց ավելի պրոդուկտիվ օգտագործել ժամանակս. ավելի շատ շփվել տարբեր մարդկանց հետ, բացահայտել ու ուսումնասիրել նոր մշակույթներ, ծանոթանալ տվյալ երկրում գործող կազմակերպություններին ու իրենց գործունեությանը, և որ ամենակարևորն է՝ իրականացնել ակտիվ փորձի փոխանակում: 5 ամիսների ընթացքում հնարավորություն ունեցա կամավորություն անելու խորվաթական մի քանի կազմակերպություններում, ինչպես նաև մասնակցելու իրենց կողմից կազմակերպված այլ միջոցառումների:

Երևի նկատեցիք, որ պատմությանս մեջ շատ օգտագործեցի «հնարավորություն» բառը: Այո՛, Erasmus+ ծրագիրն ինձ համար հնարավորությունների համախումբ էր և, իհարկե, անկրկների ակնթարթների իսկական հրավառություն:

Բոլոր ուսանողներին մաղթում եմ Erasmus+ ծրագրի անմոռանալի փորձ ու հրաշալի հիշողություններ :)

Լիլիա Մնացականյան
Ֆինանսական ֆակուլտետ, 3-րդ կուրս
Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Ողջույն, ես Լիլիան եմ՝ Ֆինանսական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող: Ուսումնառությանս մի կիսամյակն անցկացրել եմ Գերմանիայի Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարանում: Համալսարանական առաջին իսկ տարվանից հետաքրքրված եմ եղել ՀՊՏՀ գործընկեր համալսարաններից մի քանիսով: Արդեն երկար ժամանակ է՝ մասնակցում եմ Էրազմուս+ կարճաժամկետ ծրագրերին (երիտասարդների փոխանակում, սեմինարներ), սակայն միշտ ցանկություն եմ ունեցել Էրազմուսի ֆորմալ կրթական ծրագրում ներգրավվելու:

Գերմանիայի համալսարանի հետ գործընկերությունը նոր էր, ոստի մենք առաջին հայ ուսանողներն էինք, որը մեծ պատասխանատվություն էր յուրաքանչյուրիս համար:

Ինչ վերաբերում է կրթական համակարգին, այն բավականին տարբերվում է: Չնայած անգլերենով դասավանդվող առարկաների սակավությանը՝ դրանք պրակտիկ են, իսկ պրոֆեսորադասախոսական կազմը՝ մոտիվացնող:

Էրազմուսն ինձ հնարավորություն տվեց ծանոթանալու օտարերկրյա ընկերներիս մշակույթներին, պատմել Հայաստանի մասին համալսարանում կազմակերպված մշակութային երեկոյին՝ բազմազգ հանդիսատեսի ներկայությամբ, պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

Շնորհակալ եմ Էրազմուս ծրագրին, որ այս մեկ կիսամյակն ինձ համար դարձրեց կրթական առումով առավել բեղուն և ստեղծեց ինձ համար աննյութական, բայց միշտ մնայուն «հուշալբոմ»:

Ժասմեն Շահբազյան
Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս
Կրակովի տնտեսագիտական համալսարան (Լեհաստան)

Ես Էրազմուս ուսանող եմ Կրակովում Հայաստանից: Մարդկանց ներկայանալիս ես այս նախադասությունը օգտագործել եմ ամենից շատ վերջին երեք ամիսների ընթացքում: Բավականին դժվար է բառերով ներկայացնել այն զգացմունքներն ու փորձը, որ ես ձեռք եմ բերում այստեղ, սակայն ես կփորձեմ ներկայացնել այն լավագույն կերպով:

Ամեն ինչ սկսվեց դեռ Հայաստանում: Մեր համալսարանում աշխատում է փոխանակման ծրագրի լավագույն թիմը, ովքեր օգնում էին մեզ ամեն քայլին, կիսվում իրենց փորձով, նախապատրաստում ամեն ինչին, անհանգստանում, անընդհատ կապ պահում մեզ հետ: Այդ ամենից հետո, երբ մենք արդեն Կրակովի տնտեսագիտական համալսարանում էինք, այդքան հեռու մեր երկրներից, Կրակովի փոխանակման ծրագրի թիմը արեց ամեն ինչ, որպեսզի մենք մեզ զգանք ինչպես տանը, նրանք պատասխանում էին մեր բոլոր հարցերին, համբերատար օգնում ամեն ինչում, անգամ ամենաչնչին հարցերում, արագորեն լուծում ցանկացած տեխնիկական կամ այլ բնույթի խնդիր:

Բացի վերը նշվածից, ինձ համար այս ծրագրի ամենակարևոր հատվածը տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ ծանոթանալն է, կիսվել փորձով, գտնել ընդհանրություններ ազգերի միջև, իմանալ ամեն ինչ աշխարհի տարբեր երկրների մասին Բրազիլիայից մինչև Չինաստան, և, որ ամենակարևորն է, ներկայացնել բոլորին քո երկիրը, կարողանալ բարևել ավելի քան 50 լեզվով: Ինձ համար մեծ հպարտություն է լինել Հայաստանի միակ ներկայացուցիչը, սակայն, միաժամանակ, դա մեծ պատասխանատվություն է, քանի որ բոլորը Հայաստանի մասին կարծիք են կազմում ինձ նայելով: Այդ պատճառով ես փորձում եմ լինել Հայի լավագույն օրինակը, ներկայացնել մեր ազգի լավ հատկանիշները, կիսվել մեր առանձնահատկություններով: Այստեղ բոլորը սիրում են Հայաստանը, ցանկանում են գալ և տեսնել մեր չքնաղ բնությունը, պատմական ու մշակութային ժառանգությունը, հյուրասեր ու բարի մարդկանց: Ոմանք անգամ սկսել են հայերեն սովորել իմ օգնությամբ, քանի որ հետաքրքրված են մեր հին ու գեղեցիկ լեզվով: Այստեղ բոլորը պատկերացնում են Հայաստանը արևոտ և պայծառ երկիր, որտեղ մարդիկ բարի են և հյուրասեր:

Չնայած այդ ամենը անչափ կարևոր է, Էրասմուս ծրագրի գլխավոր նպատակը կրթությունն է: Կրակովի տնտեսագիտական համալսարան գալու առաջին իսկ օրվանից ես հասկացա, որ պատրաստվում եմ սովորել լավագույն դասախոսների հետ և ստանալ լավագույն կրթությունը: Այստեղ դասախոսները բավականին բարձր կարծիք ունեն հայերի մասին, և ես փորձում եմ համապատասխանել այդ չափանիշներին և արդարացնել իրենց սպասելիքները: Նրանք հատկապես գնահատում են այն փաստը, որ ես ընտրում եմ Հայաստանի վերաբերյալ թեմաներ բոլոր առարկաների համար: Այս երեք ամիսների ընթացքում ես փորձել եմ ցույց տալ մեր՝ Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի կրթության որակը և լինել հայ ուսանողի լավագույն օրինակը:

Ընդհանուր առմամբ, իհարկե բավականին դժվար է լինել տանից այդքան հեռու և միակ ներկայացուցիչը քո երկրից, սակայն երբ շրջապատված ես այսքան լավ մարդկանցով աշխարհի տարբեր երկրներից, այս ամենը դառնում է հետաքրքիր արկած: Կարող եմ վստահորեն ասել, որ Էրասմուս ուսանող լինելը իմ կյանքի ամենահետաքրքիր ու կարևոր հատվածներից է, և վստահ եմ, որ բոլոր Էրասմուս ուսանողները կհամաձայնեն ինձ հետ: Ինչպես ասում են, մեկ անգամ Էրազմուս, ընդմիշտ Էրազմուս. . .

Մերի Հովսեփյան
Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ,
մագիստրատուրա 1-ին կուրս
Պոզնանի տնտեսագիտության և բիզնեսի համալսարան (Լեհաստան)

Ավելի լավ համակցություն քան լինել Էրազմուս+ ուսանող և անցկացնել Էրասմուսը Պոզնանում, չկա: Բացատրեմ թե ինչու.

Գունավոր, կոլորիտային, մոդեռնի ու հնի իդեալական համադրությամբ այս քաղաքը քչերին է հայտնի. ինձ էլ հայտնի չէր մինչև, մինչև... Երևանի գերակտիվ կենսակերպից ու անընդհատ վազքից կտրվելու լավագույն դեղատոմսը ես գտա Պոզնանում: Իդեալական քաղաք ապրելու, սովորելու, ինքնակատարելագործվելու, ինքդ քեզ ու աշխարհը բացահայտելու համար: Իսկզբանե ինձ թվում էր, որ դժվար կլինի տեղաբնակների հետ ապրել, հատկապես, որ չէի տիրապետում լեհերենին, բայց ինչպես պարզվեց, այստեղ մարդիկ բարի են և պատրաստակամ օգնելու և աջակցելու:

Առաջին հայացքից անորոշ թվացող Էրազմուսը իրականում մանրակրկիտ պլանավորված էր համալսարանի և Էրազմուսի ուսանողական խորհրդի կողմից: Հենց առաջին իսկ շաբաթվա ընթացքում մեզ ակտիվորեն ինտեգրեցին համալսարանական նոր կյանքին, քաղաքին և կոտրեցին միջմշակութային կարծրատիպերը: Էրազմուսի, ըստ իս՝ գլխավոր առավելություններից է, որ ուսանողն է

որոշում ինչ առարկաներ ընտրել, ու այդ որոշումը կայացնում է հիմք ընդունելով ոչ միայն առարկայի անվանումը, այլև հաճախելով երկշաբաթյա դասախոսություններին գնահատում է այդ առարկայի կիրառական նշանակությունը: Այսինքն, այստեղ մենք սովորում ենք այն ինչը մեր հետաքրքրությունների և նեղ մասնագիտական ուսումնասիրությունների շրջանակներում է:

Այստեղ անցկացրածս 5 ամսիսներից հետո կարող եմ միանշական պնդել, որ Պոզնանի տնտեսագիտական համալսարանը լավագույններից մեկն է Լեհաստանում: Համալսարական մթնոլորտը, պրոֆեսորադասախոսական կազմը և կրթական նոր համակարգը թույլ են տալիս լավագույնս ինքնադրսևորվել: Ուրախությամբ պետք է նշեմ, որ ակտիվ մասնակցություն եմ ունեցել համալսարանի կողմից կազմակերպվող ծրագրերին, սեմինարներին և հպարտությամբ պետք է նշեմ, որ բախտ եմ ունեցել մասնակցել նաև աշխարհահռչակ տնտեսագետ, Հարվարդի բիզնես դպրոցի պրոֆեսոր Մայքլ Փորթերի դասախոսությանը, որը նվիրված էր ընդհանուր արժեքի ստեղծմանը որպես նոր մրցակցային առավելություն: Եվ որպեսզի պատկերացնեք որքան հմուտ և մոտիվացնող են մեր համալսարանի դասախոսները, նշեմ, որ բարձր ակտիվություն ցուցաբերող մի քանի ուսանողներիս հնարավորություն ընձեռեցին ներկա գտնվել այդ պատմական արարողությանը: Եվ սա ընդամենը բազում օրինակներից մեկն է, թե ինչ հնարավորություններ կարող է ընձեռել կրթությունը արտասահմանում:

Մի շատ կարևոր հանգամանք ևս. արտերկրում մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու է լավագույնս ներկայացնելու մեր երկրիը: Պետք է ուրախությամբ փաստեմ, որ հետ կգամ հայրենիք հանգիստ խղճով, իմանալով, որ կատարել եմ պարտքս, և կարծում եմ ինչ-որ տեղ հաջողել եմ հաշվի առնելով դասախոսներիս և աշխարհի տարբեր ծայրերից ընկերներիս հետաքրքրությունը մեր երկրի ու մշակույթի մասին, որը նկատել եմ այստեղ լինելու առաջին իսկ շաբաթվանից, երբ ներկայացնում էի հայկական ուտեստներն ու քաղցրավենիքները: Այսպիսով ինձ համար Էրազմուսը նաև կարճաժամկետ դիվանագիտական աշխատանքի փորձառություն կարելի է համարել: Եվ վերջապես, լինելով Էրազմուս ուսանող քո առջև բացվում են անսահմանափակ հնարավորություններ բացահայտելու աշխարհը, ազգություններին և ամենատարբեր մշակույթները: Ու այս առումով նույնպես Պոզնանն ունի իդեալական աշխարհագրական դիրք: Ըստ իս, ոչ մի ուրիշ տեղ ուսանողն այսքան մեծ արժեք չի ներկայացնում որքան եվրոպայում, ուստի «եվրոպական արժեքներն» վատաբանելու փոխարեն, պարզապես կարելի է վերցնել լավը, ընդօրինակելին, որը Եվրոպայում շատ-շատ է:

Ամփոփելով նշեմ, որ սա անկասկած եզակի հնարավորություն էր իմ կյանքում: Ես ինձ համարում եմ Էրազմուս ընտանիքի անդամը և միշտ երախտապարտ կլինեմ ինձ ընձեռելու համար այս հնարավորությունը: Ինչպես նաև միանշանակ երաշխավորում եմ, որ Պոզնանի տնտեսագիտության և բիզնեսի համալսարանը լավագույններից մեկն է սովորելու և ուսանողական կյանքը վայելելու համար:

Մերի Նիկոլայան
Ֆինանսական ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս
Միշկոլցի համալսարան

Բարև՛: Ես Մերին եմ: Ներկայացնում եմ իմ հաջողության պատությունը: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ 2014թ.-ին ընդունվեցի լավագույն համալսարանը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան: Մասնագիտությամբ ֆինանսիստ եմ, մասնագիտացումս՝ բանկային գործ: Չգիտեմ՝ պատահականություն էր, թե ոչ՝ 2018-ին դիմեցի Էրազմուս + ծրագրին և այժմ մագիստրոսական ծրագրիս երկրորդ կիսամյակը անցկացնում եմ Հունգարիայի Միշկոլցի համալսարանում: Միշկոլցը հյուրասեր, անչափ գեղեցիկ, կարելի է ասել ուսանողական քաքաղ է: Համալսարանը յուրօրինակ ոճով, ժամանակակից և հարազատ միջավայր է : Ուսանողական կյանքը այստեղ աննկարագրելի հագեցած է: Առավոտյան՝ դասեր, միջազգային որակավորում ունեցող դասախոսներ, կրթական նոր մեթոդներ և հիմնարար գիտելիքներ: Համալսարանին կից գրադարանը կատարյալ

վայր է՝ պատրաստելու դասերը և օգտվելու լայն գրականության ցանկից: Դասերց հետո սպորտով զբաղվելու ժամանակն է. թենիսի կորտեր, պարասրահներ, լողավազան: Դե հանգստյան օրերն էլ ճամփորդության համար են: Հասցրել եմ այցելել տասը եվրոպական երկրներ, տասնհինգ քաղաքներ,ունենալ հազարավոր անմոռանալի պահեր,նշել տարեդարձս երազանքների քաղաք Փարիզում և դեռ ամեն ինչ առջևում է :

Էրազմուսը ապրելակերպ է, կյանքի փորձ: Էրազմուսը կյանքի մի ընթացք է, երբ հասցնում ես սովորել, տեսնել և իմանալ ավելին, քան մարդը կարող է մի ամբողջ կյանքում: Հնարավորություն՝ բացահայտելու ինքդ քեզ, ձեռք բերելու ինքնուրույնություն: Էրազմուսը հանդիպում է աշխարհի հետ մեկ վայրում: Էրազմուսը մարդիկ են. Բասսելը՝ Սիրիայից, Կամիլը՝ Ֆրանսիայից ,Մերիլին ՝ Էստոնիայից: Ընտանիք, որոնց հետ կիսում եք փորձ, գիտելիք, լեզուներ, մշակույթ և ,իհարկե, քաղցրավենիք : Երբ վերադառնամ, ինչ խոսք, շատ կկարոտեմ: Բայց հիմա գիտեմ, որ ես տուն ունեմ աշխարհի շատ վայրերում, որտեղ ինձ սպասում են իմ ընկերները , իմ տունն էլ Երևանում սպասում է նրանց:

Եթե դու հիմա կարդում ես ու մտածում, որ սա հենց այն է,ինչ դու ուզում ես, մի՛ կորցրու ժամանակդ, անպայման փորձի՛ր ուժերդ և ստեղծի՛ր քո էրազմուսյան պատմությունը:

Վերջում, ուզում եմ մեծ շնորհակալությունս հայտնել ՀՊՏՀ-ին և արտաքին կապերի բաժնին այս հնարավորության համար, ինչպես նաև մշտական ուշադրության և աջակցության համար: Köszönöm (շնորհակալություն):

Սրբուհի Չալիկյան
Ֆինանսական ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս
Վառնայի տնտեսագիտական համալսարան

Եվրոպական համալսարանում սովորելը միշտ եղել է առաջնային նպատակներիցս մեկը: Անընդհատ հետապնդելով այդ գաղափարը և ձգտելով հասնել նպատակիս՝ «Էրազմուս+» փոխանակման ծրագրին դիմելուց հետո ընդունվեցի Վառնայի տնտեսագիտության համալսարան, որը Բուլղարիայի ամենահին համալսարաններից է: Վառնայում սովորելը իմ առջև բացեց բազմաթիվ հետաքրքիր ու յուրօրինակ հնարավորություններ, տվեց լավագույն փորձն ու հիշողությունները: Ծրագրին մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ նոր մշակույթներին, ժամանակակից ուսուցանելու մեթոդներին, ստանալ ավելի խորը տնտեսագիտական գիտելիքներ, ճամփորդել, բացահայտել բուլղարական չափազանց գեղեցիկ և հետաքրքիր քաղաքները, ավանդույթները: Կարողացա ձեռք բերել բազմաթիվ ընկերներ աշխարհի շուրջ 17 երկրներից և նրանց ներկայացնել Հայաստանը, հայկական մշակույթն ու խոհանոցը: Կարելի է ասել, որ Էրազմուսը արկածներով և բացահայտումներով էր՝ հագեցած զվարճալի, անհավատալի, անելանելի թվացող և միևնույն ժամանակ չափազանց հաճելի ու հիշարժան պատմություններով: Այսպիսով, եթե ցանկանում եք ունենալ փորձ ամբողջ կյանքի համար, լինել ինքնուրույն, բացահայտել ինքներդ Ձեզ և չվախենալ Ձեր ճանապարհին հանդիպած խոչընդոտներից, ապա Էրազմուսը ամենալավ բանն է, որ կարող է պատահել, քանի որ ինչպես ասում ենք՝ “Once Erasmus, always Erasmus”: Շատ շնորհակալ եմ ՀՊՏՀ միջազգային կապերի բաժնին այս հիասքանչ հնարավորության համար:

Սուրեն Մինասյան
Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս
Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Մասնագիտական նպատակներին և երազանքներին հասնելու համար մենք հաճախ հարկադրված ենք՝ կատարելու խիզախ որոշումներ: Աշխատանքս կիսատ թողնելու և ուսումս արտասահմանյան բուհում շարունակելու իմ խիզախ որոշումն այնքան նշանակալի և կարևոր էր ինձ համար, որ այնտեղ լինելու առաջին օրերին անգամ ունեի սովորելու նոր բաներ:

Հետաքրքրված լինելով տնտեսագիտությամբ և ցանկություն ունենալով՝ ուսումս շարունակելու հենց այս ուղղությամբ՝ ընդունվեցի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ ձեռք բերելու մագիստրոսի որակավորում՝ միջազգային արժութաֆինասական հարաբերությունների մասնագիտացմամբ: Իմ համալսարանը, ակտիվորեն ներառված լինելով միջազգային փոխանակային ծրագրերում, մշտապես իր ուսանողների և աշխատակիցների համար ստեղծում է նոր հնարավորություններ: Մյուս կողմից, հասկանալով իմ ընտրած ուղու բարդությունը և պատասխանատվությունը՝ ես գիտակցում էի մասնագիտական և անձնական որակների շարունակական զարգացման անհրաժեշտությունը՝ միջազգային բարձր մրցակցային աշխատաշուկայում արժանի թեկնածու դիտարկվելու նպատակով: Ահա թե ինչու սեփական նպատակներիս հասնելու ձգտումն ինձ ստիպեց մտածել արտասահմանում որևէ կրթական փոխանակային ծրագրին մասնակցելու մասին, և համալսարանիս էջում համապատասխան առաջարկը փնտրելիս ընտրեցի Գերմանիան՝ առանց տատանվելու:

Լինելով գերմանական Ցվիկաու քաղաքում, որը հայտնի է մեքենաշինության ավելի քան հարյուր տարվա պատմությամբ, առաջին երևույթը, որը գրավեց իմ ուշադրությունը՝ որպես տնտեսագետի, կապիտալիստական և սոցիալիստական հասարակարգերի միջև դասական տարբերությունն էր: Գերմանիան զարգացվածության տարբեր աստիճաններ ունեցող իր երկրամասերով իդեալական օրինակ է՝ հասկանալու տնտեսական քաղաքականությունների ձեռքբերումները և մարտահրավերները:

Ցվիկաուի կիրառական գիտությունների արևմտասաքսոնական համալսարանում ուսումնառելու իմ հնարավորությունը մեծ նշանակություն կունենա իմ հետագա մասնագիտական ուղին կերտելու գործում: Ուսումը եվրոպական բուհում, որտեղ կրթական համակարգը լիովին տարբերվում է հայկականից, ինձ հնարավորություն տվեց՝ ձեռք բերելու կիրառական նոր գիտելիքներ, շփվելու կայացած պրոֆեսորների, ինչպես նաև գերմանացի և միջազգային այլ ուսանողների հետ, որոնք ունեն կյանքի, կրթության և առհասարակ ամեն ինչի վերաբերյալ տարբեր մոտեցումներ:

Ես վստահ եմ, որ արկածներով լի այս վեց ամիսները չեն մոռացվի. ընկերները, զգացումները և հիշողությունները՝ ձեռք բերված այս ամիսների ընթացքում, կազմեցին իմ կյանքի մի մասը: Ես հասկացա, որ լեզուն և մշակույթն իսկապես չեն կարող խոչընդոտել նոր ընկերներ ձեռք բերելու և նրանց հետ ամուր կապ ստեղծելու հարցում: Ես վերադարձա Գերմանիայից՝ ձեռք բերելով ընկերներ, սովորած նոր լեզու և բացահայտած նոր մշակույթներ՝ Եվրոպայում ճանապարհորդելու շնորհիվ: Այս ամիսներն ինձ հնարավորություն տվեցին՝ բացահայտելու իմ մյուս կողմերը: Հարմարավետության գոտուց դուրս գտնվելը՝ շրջապատված նման իրավիճակում հայտնված շատ ընկերներով, ստիպեց ինձ մոռանալ խոցելիության մասին: Այն դարձրեց ինձ ավելի համարձակ և անկաշկանդ նոր հնարավորություններ և արկածներ փնտրելիս: Այս ամենն իդեալական էր բոլոր կողմերդ բացահայտելու և ստեղծված կարծրատիպերը կոտրելու համար:

Իմ Էրազմուս պատմությունն ուղղակի հրաշալի էր:

Սյուզի Վանոյան
Ֆինանսական ֆակուլտետ, 3-րդ կուրս
Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)

Ողջույններ Գերմանիայից: Ես Սյուզին եմ: Էրազմուս+ ծրագրի շրջանակներում սովորում եմ Գերմանիայում՝ Ցվիկաուի Կիրառական Գիտությունների Համալսարանում: Դեռ դպրոցական տարիներից երազել եմ արտերկրում կրթություն ստանալու մասին: Տարիների ընթացքում երազանքը վերափոխվեց նպատակի, իսկ այժմ այն իրականություն է: Գերմանիան լավագույն բարձրագույն կրթություն ապահովող երկրներից մեկն է աշխարհում. ես դրանում համոզվեցի: Ցվիկաուի Կիրառական Գիտությունների Համալսարանում կիրառվում են նորագույն տեխնոլոգիաներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմը ջանք չի խնայում ուսուցանվող նյութերը առավել որակյալ և մատչելի մատուցելու համար, իսկ մենք՝ ուսանողներս, մեր ակտիվությամբ նպաստում ենք նրանց աշխատանքի մաքսիմալ արդարացմանը: Դասախոս-ուսանող հարաբերությունները, դասն անցկացնելու մեխանիզմը բոլորեվին այլն են՝ ավելի հետաքրքիր և ինտեգրացնող: Արդյունքում սովորելը ոչ թե ձանձրացնող, այլ ուսուցանող և մոտիվացնող է դառնում: Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ես դարձա ավելի ճկուն, հարմարվող և, կարծում եմ, սա լավագույն հնարավորությունն էր ինքնուրույն դառնալու:Այս ծրագիրը ինձ համար ունեցավ թե՛ կրթական, թե՛ մշակութային մեծ նշանակություն: Ծանոթացա տարբեր երկրների մշակույթներին, սովորույթներին, ապրելակերպին: Մշակութային երեկոների շնորհիվ ընկերներ ձեռք բերեցի ոչ միայն Գերմանիայից: Ուրախ եմ, որ կրթության մասին խոսելիս կկարողանամ հպարտությամբ նշել Գերմանիայում ունեցածս փորձի և Էրազմուս+ ծրագրի տված բազմաթիվ հիշողությունների մասին:

Տիգրան Ղալայան
Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, 3-րդ կուրս
Ցենովի տնտեսագիտական ակադեմիա (Բուլղարիա)

Արտերկրում սովորելու որոշում կայացնելը այդքան էլ հեշտ չէր ինձ համար: Նոր փորձ ձեռք բերելու հնարավորության և մշակութային ու լեզվական խնդիրների մասին իրարամերժ մտքերը անընդհատ վերլուծության էին ենթարկվում իմ մտքում:

Բայց ես իրականում պատրաստ էի, ես ցանկանում էի ապացուցել ինքս ինձ, որ ունակ եմ հաղթահարել այս մարտահրավերը և մինչև այժմ ոչ մի վայրկյան չեմ զղջացել, որ հայտնվել եմ այստեղ, Բուլղարիայի Սվիշտով քաղաքում:

Առաջին իսկ օրվանից ինձ պարզ դարձավ որ մարդիկ այստեղ բաց և պատրաստակամ են համագործակցության համար, համակարգման համար պատասխանատու անձինք ջանք չէին խնայում մեզ օգնելիս, նրանց շնորհիվ մենք շատ կարճ ժամանակահատվածում հարմարվեցինք նոր տեղանքին:

Մյուս ուսանողներն ինձ պես առաջին անգամ էին մասնակիցը դառնում այս ծրագրի, և ունենալով նմանատիպ նպատակներ և կանգնած լինելով նույնանման մշակութային դժվարությունների առջև՝ մենք

կարճ ժամանակում ընկերական մթնոլորտ ստեղծեցինք և դարձանք գործընկերներ համատեղ դասընթացների ժամանակ: Ես շարունակում էի ստանալ նորանոր գիտելիքներ ոչ միայն դասընթացների ժամական, այլ նաև դրանցից դուրս, բուլղարացիների մշակույթի և ավանդույթների մասին:

Ուսուցումը անցկացվում էր փոքր խմբերով (4-8 հոգի), մեծ նշանակութուն էր տրվում ուսանողի կատարած աշխատանքին և նյութի ներկայացման ձևին: Թեմաները ներկայացվում էին պրեզենտացիաների տեսքով: Կիսամյակի ավարտին ինքս ներկայացրել եմ 4 պրեզենտացիա տարբեր առարկաներից և բարելավել ունակություններս ինչպես դրանց պատրաստման, այնպես էլ անգլերենով ներկայացման մասով: Մասնակցել եմ սկսնակների համար նախատեսված չինարենի և բուլղարերենի դասընթացներին և ստացել հավաստագրեր, ինչպես նաև ուսանողական կոնֆերանսին Բուլղարիայի Կռանեվո քաղաքում և ներկայացրել անյտեղ իմ էսսեն տրված "Student experience and opportunities for engagement in multi-stakeholder partnerships to achieve sustainable development goals" թեմայի շուրջ:

Այս ժամանակահատվածում հասցրել եմ ճամփորդել 6 տարբեր երկրներում իմ ընկերների հետ ավելի քան 10 երկրներից: Լինելով շրջապատված խելացի և նպատակասլաց երիտասարդներով՝ ես բարելավում էի իմ հասարակական և մասնագիտական գիտելիքները, և դա տեղի էր ունեում ինքնաբերաբար սովերելու, ինչպես նաև ընկերներիս հետ ժամանակ անցկացնելու ընթացքում, քանի որ նրանք իրենց համալսարանների առաջադեմ ուսանողներն էին, ոմանք մագիստրոսներ, ոմանք նույնիսկ ասպիրանտներ և հայցորդներ:

Արդյունքում ես ինձ կարող եմ հաջողակ անձնավորություն համարել այս անմոռանալի փորձից հետո, որը ես դեմ չեմ լինի կրկնել ապագայում: